Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

372.21
Հ-42

ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

ԺԲ

ԻՍ. ՑԱՐՈՒԹԻՆԵԱՆ

ԾԱՂԿՈՑ

(ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՑԷԶ)

«Frisch, frei, fröhlich, fromm».
«Թարմ, ազատ, ուրախ, հաւատաւոր»

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Շարաձէի եւ Ընկ., Նիկ. 21.
1901

372.21
Հ-42

ԻՍՀԱԿ ՑԵՐՈՒԹԻՆԵԱՆՑԻ

աշխատութիւնները

1. ՀԱՅՈՑ ԳԻՐՔ, պակուած Սահ.-Մեսրոպ. մրցանակով. գինն է 1 ր. 50 կ.
2. ՀԱՄԱՌՕՏ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ. գինն է 1 ր.
3. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ մանկավարժական բարձրագոյն հաստատութիւնների գործունէութ. և հայ ուսանողները. գինն է 40 կ.
4. ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ սանների առաջին դպրոց. ճանապարհորդութիւնը. յաւելուածով. գինն է 40 կ.
5. ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ սանների երկրորդ դպրոցական ճանապարհորդութիւնը. գինն է 20 կ.
6. ՍՏԵՓԱՆՈՍ ՊԱԼԱՍԱՆԵԱՆ. գինն է 25 կ.
7. ԱՐԱԿԵՐՏԻ ՑՈՒՐԱՏԵՏՐԸ. գինն է 30 կ.
8. ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՐԽԱՐՀ (Ղէրբ Հայաստանի). գինն է 30 կ.
9. ՍԱՆԱՀԻՆ. գինն է 30 կ.
10. ԻՄ ՕՐԱԳԻՐՔ. գինն է 25 կ.
11. ԾԱՂԿՈՑ (մանկական պարտէզ). գինն է 10 կ.

Տպագրութեան համար պատրաստ է

12. Համառօտ հոգեբանութիւն.

372.21
Հ-49
120-10

ՆՈՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԺԲ

ԻՍ. ՑԵՐՈՒԹԻՆԵԱՆ

1002
ԲԱ 98

ԾԱՂԿՈՑ

(ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ)

«Frisch, frei, fröhlich, fromm».
«Թարմ, ազատ, ուրախ, համեստ».

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԳՍԱՆ

Թիֆլիզ
Տպարան Մ. Ճարաճէի եւ Ընկ., Նիկ. 21.
1901

50.828

10 JUN 2013

Дозволено цензурою, Тифлисъ, 17-го Января 1901 года.

Նուէր

ԼՕՆԴՈՆԻ ՓՐԷՕԲԵԼԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻ ԱԶՆԻՒ ՕՐԻՈՐԴ

ՓԼ. ՅՈՎՀԱՆՋԱՆԵԱՆԻՆ

Հեղինակից:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Վերջին տարիներս տեղական լրագրական յայտարարութեանց բաժնում յաճախ աչքի է ընկնում նոր բացուող մանկական պարտէզների մասին տեղեկութիւններ։

Տիֆլիսի հայ շրջանների համար մանկական պարտիզի գաղափարը նորութիւն չէ և արդէն մի քանի տասնեակ տարիներ առաջ յաջող գործադրութիւն էր գտել յարգելի Տիկին Ս. Բաբայեանի նախաձեռնութեամբ և տոկուն աշխատութեամբ։ Այնուհետև հանգամանքները փոխուեցան և մանկական պարտէզները գոյութիւն չէին կարող ունենալ նոյն հիմքերով։

Այժմ բացուող և հետզհետէ շատացող մասնաւոր մանկական պարտէզները թէև ուրիշ հիմունքներով պէտք է գոյութիւն ունենան,

բայց այնուամենայնիւ մենք դրանց պահպանութիւնն օգտակար համարելով՝ սոյն համառօտ գրուածքով ուզում ենք բացատրել թէ ինչ ուղղութիւն պէտք է տիրէ այդ հիմնարկութեանց մէջ, որպէս զի ծնողները չխորշեն իրենց 4—6 տարեկան ընդոյշ սիրելիներին մանկական պարտէզ տալու դաղափարից։ Մեր խօսքը կը սահմանափակուի միմիայն տեսութեամբ, առանց մեթօդիկային վերաբերեալ խնդիրներ շօշափելու։

Տփխիսի և միւս մեծ քաղաքների հայ բնակիչների կեանքն այժմ բոլորովին հեռի է բնական լինելուց և պարզ կենցաղավարութիւնից։ Մեր երեխաները մատաղ հասակից սկսած անգործ են անցկացնում իրենց օրերը՝ փողոցում կամ բակերում շրջելով—հայրերն անկարող են հսկել՝ դուրսը զբաղուած լինելով, իսկ մայրերն եթէ ազքատ են՝ ծանրաբեռնուած են ընտանեկան գործերով, իսկ եթէ հարուստ են՝ երեխաներին թողնում են դայեակների ու աղախինների մեծ մասամբ անբարոյականացուցիչ ազդեցութեան ներքոյ—։ Այդ է պատճառն ահա, որ մեր երեխաները դպրոց մտնելուց առաջ արդէն շատ անգամ իւրացրած են լինում ամենավատ և փողոցային յատկութիւններ, որոնց ուղղելը կամ շատ դժուար է լինում ապագայում, կամ անկարելի։

Մանկական պարտէզը բարոյական ազդեցութիւն կարող է ունենալ՝ մատաղ սերունդն աղատելով վատ շրջանից, նախապատրաստելով տարրական և ապա միջնակարգ դպրոցների համար և մանուկներին սովորեցնելով աշխատասիրութեան և պարտաճանաչութեան։

Իսկ թէ որքան մեծ նշանակութիւն են տալիս ծաղկոցին Եւրոպայում, պարզ ապացոյց է այն հանդամանքը, որ վերջերս Գերմանիայի կանանց ընկերութիւնների միութիւնը դիմել է կառավարութեանը, խնդրելով, որ ծաղկոցի դասընթացն ևս օրէնքով պարտաւորեցուցիչ համարուի երկու սեռի բոլոր երեխաների համար։

Իսահակ Ցարուբիւնեանց

1901 թ. յունուար։
Տփխիս.

Բանուկներին նպատակայարմար դաստիարակություն տալու համար՝ անհրաժեշտ է ճանաչել նրանց հոգևոր կեանքը։ Կեանքն արտայայտւում է գործողության մէջ, իսկ այն գործողությունը, որ յատուկէ բոլոր մանուկներին — խաղն է։ Իւրաքանչիւր մանուկ խաղում է և պէտք է խաղայ, որպէս զի թէ ֆիզիկապէս և թէ հոգեպէս զարգանայ։ Խաղալու ձգտումն երեխաների մէջ բնածին է. մի քանի շաբաթուայ ծծկեր երեխան արդէն կարծես խաղում է իւր մօր զգեստի ծոպերի հետ։ Երեխան հէնց որ գիտակցաբար կարողանում է իւր անդամները շարժել, ձգտում է մի որ և է առարկայ ձեռք ձգել և նրանով զբաղուել։ Նա հետզհետէ մեծանալով՝ նրա զգայարաններն էլ զարգանում

են և նա դիտում է իրեն շրջապատողների արածները և ձգտում է նմանուել նրանց, փորձում է կրկնել նրանց արածները—նա արդէն խաղում է։

Ուտել—խմելուց ու քնելուց յետոյ մանկան միակ զբաղմունքը խաղն է. խաղը նրա կեանքն է և ամբողջ կեանքը նրա համար մի խաղ է։ Ըստ նրա հասկացողութեան ու ըմբռնման՝ խաղում է ամբողջ բնութիւնը, նրա ամբողջ շրջակայքը. խաղում են ոչ միայն մարդիկ ու անասունները, այլ և անկենդան իրերը։

Մեր հոգևոր զօրութիւններն երևան են գալիս շարժողութիւններով ու գործողութիւններով, հոգին չի կարող զարգանալ առանց գործողութեան. երեխաների գործողութիւնը միայն շարժողութիւնն է կամ շարժողութիւնների բարդութիւնը, այն է խաղը։

Ինկատի ունենալով ուրեմն խաղի մեծ նշանակութիւնը մանուկների դաստիարակութեան համար, երեխաների խաղը չպէտք է թողնուի անխնամ և արտաքին հանգամանքների ազդեցութեան ենթակայ, այլ ընդհակառակը պէտք է առաջնորդել մանուկներին, որ նրանց խաղը նպատակայարմար և արդիւնաւոր լինի նրանց թէ մարմնի և թէ հոգու զարգացման համար։ Մանկան խաղը նրա ձգտումների ազատ արտայայտութիւնն է, իսկ այդ ձգտումները կազմում են ապագայ մտաւոր կեանքի սաղմերը. մանկական խաղերին նպատակայարմար ուղղութիւն տալով՝ պէտք է նպաստենք այդ ձգտումների կանոնաւոր զարգացմանը, որպէս զի նրանք կարողանան ազատ աճել և առողջ պտուղ տալ ապագայում։

Հասակաւորներս հեշտութեամբ կարող ենք դիտել, որ մանուկները բացի կերակրի պահանջից՝ *շարժողութեան ձգտումն* են ցոյց տալիս։ Մանուկը ծնուելուց մի քանի օր յետոյ արդէն սկսում է շարժել իւր անդամները բնազդմամբ—ինչու, որովհետև այդ շարժողութիւնները կարևոր են նրա ամբողջ մարմնի կանոնաւոր զարգացման համար։ Երեխան սկզբումն առանց մի որևէ նպատակի է շարժում իւր անդամները, բայց հետզհետէ, ժամանակի ընթացքում, այդ աննպատակ շարժողութիւններից փոքր առ փոքր առաջանում է որոշեալ նպատակին հասնելու համար դիտմամբ կատարած գործողութիւնը. օրինակ օրորոցի երեխան անգիտակցաբար շարժում է իւր ձեռքերը և ոտները. դիպուածով նրա ձեռքն ու ոտքը դիպչում են այս կամ այն առարկային և այդպէս կրկնելով՝ նա փորձով հասկանում է, որ մի քանի առարկաներ իրենից հեռու են, մի քանիսը մօտիկ, մի քանիսը փա-

փուկ են, միւսները կոչտ։ Այդպէս նաև երեխան սկզբումը գիտակցութիւն չունի, որ ինքը կարող է մի տեղից միւս տեղ փոխուել, բայց ոտքերի և ձեռքերի օգնութեամբ նա հետզհետէ կարողանում է իւր տեղը փոխել, մօտենալ իւր ցանկացած առարկային և վերջը՝ ման է դալիս։

Ուրեմն մանուկները հէնց ծնուելու օրերից սկսած՝ ձգտումն են ցոյց տալիս դէպի գործողութիւնը. դաստիարակութիւնն օգտուելով այդ բնատուր հանգամանքից՝ պէտք է ամեն կերպ աշխատէ զարգացնել այդ ձգտումը մանկան մէջ և կատարելագործէ, որովհետև մարդկային կեանքըն առանց գործողութեան գոյութիւն չի կարող ունենալ։

Խաղերը մեքենական-մարմնական գործողութիւններ չեն, այլ մանկական հոգուց բղխած. խաղերի հիմքը գիտակցութիւնն է. խաղի միջոցին մանուկը գործ է դնում այն, ինչ որ ստացել է տպաւորութիւններով։ Երեխայի խաղը նիւթի զանազան ձևակերպութիւնն ու փոփոխութիւնն է, որոնելու և ճանաչելու միջոցը— իւր ներքին աշխարհի արտայայտութիւնը — մի խօսքով խաղը բոլոր հոգեկան և մարմնական ոյժերի վարժութիւնն է։ Խաղը միևնոյն ժամանակ երեխայի թէ պարապմունքն է, թէ զուարճութիւնը և թէ գործը։

Մանկան խաղի մէջ գտնում ենք դիմագծերն ու շարժողութիւնները, խօսքն ու գործը ներքին կապով միացած. տեսանելի արտայայտութեանց հետ միանում են նաև լսելի արտայայտութիւնները և այդպիսով դաստիարակը միջոց ունի մանկանց խաղը դիտելով գնել նրանց ներքին աշխարհը։ Առհասարակ խաղը մատնում է մանկան հոգեկան աշխարհում տեղի ունեցած գործողութիւններն ու փոփոխութիւնները և այդ պատճառով ամենալաւ միջոցն է դաստիարակի համար՝ հետևելու մանկան հոգւոյ զարգացմանը։

Անգործութիւնից շատ չարիքներ են առաջանում և այդ պատճառով իսկ պէտք է մանուկների համար զբաղմունք և գործ գտնել— սակայն երեխայի զբաղմունքն ու գործը, ինչպէս ասացինք, խաղն է։ Ազնիւ խաղի միջոցին երեխան չար բան չէ մտածում ու գործում. այս տեսակէտից էլ ահա խաղը հանդիսանում է իբրև կրթութեան ամենալաւ և ամենաբնական միջոցը. ամենաանկարգ ու վայրենի տղան էլ սիրելի է դառնում, երբ նրան իւր հասակի և պահանջի համեմատ խաղալու դիւրութիւն ենք տալիս։ Խաղի միջոցին երեխան վարժւում է կարգ ու կանոնի, ճշտապահութեան, եռանդի, հաստատամտութեան, հնազանդութեան —

կարճ՝ նա սովորում է այն ամենը, ինչ որ ապագայում պէտք է նրա բարոյական կեանքի հիմքը կազմէ։ Այս բոլորն աւելի հեշտութեամբ ըմբռնում է երեխան խաղի միջոցով, քան թէ խրատով, կշտամբանքով ու յանդիմանութեամբ։ Երեխան խաղի միջոցով ըմբռնում է այն ամենը, ինչ որ նրան շրջապատող մարդիկն ու բնութիւնը տալիս են և այդ պատճառով նրա խաղի մէջ գտնում ենք մարդկային գործունէութեան ամեն տեսակ սաղմեր՝ թէ արհեստագիտական, թէ արուեստին վերաբերեալ, թէ գիտնական և թէ բարոյական։ Մանուկն արհեստաւորի արած ձևերը կրկնելով՝ խաղով ուզում է նրա գործը կատարել և այդպիսով շատ անգամ շնորհք ու ճարտարութիւն է ստանում։ Բնութեան և արուեստի մէջ եղած գեղեցիկն էլ նրա ուշադրութեան է արժանանում և նա աշխատում է գեղեցիկ ձևեր կազմակերպել։

Այժմ մի հայեացք ձգենք խաղի նիւթի վրայ, որովհետև առանց նիւթի խաղ չի կարող լինել. ամեն մի խաղացող գտնէ մի խաղի առարկայ ունի, որի վրայ ուղղում է իւր գործունէութիւնը և կամ որը բաշում է նրան դէպի խաղը։ Եթէ երեխայի ձեռքը խաղի իր չտանք, նա իր շրջակայքից կվերցնի այդ իրը, ուշադրութիւն չդարձնելով՝ թէ արդեօք այդ

իրը չափահասների համար ինչի տեղ է ծառայում։ Թէև աւազը, քարի կտորները, փայտի կտորները և գնդակը հաճելի է երեխային, բայց նա վերցնում է նաև փոքրիկ նստարանները, դանակ, ժամացոյց, լուցկի, դրամ և այլն։— Երեխաները խաղում են թէ ամենահասարակ և թէ ամենաթանկագին, թէ անվնաս և թէ վնասակար իրերով, որովհետև նրանց համար բոլոր առարկաները ոչ այլ ինչ են երևում, եթէ ոչ իբրև խաղալիք։

Նրանք պահանջում են և այնպիսի խաղեր, ուր խաղացողն ու խաղի առարկան միանում են՝ օրինակ նրանք վազում են իբրև ձի, թռչում են իբրև գորտ, խօսում են իբրև հայր ու մայր, հաց են թխում իբրև հացթուխ և այլն։

Երեխայի ստացած առաջին տպաւորութիւնները մեծ ազդեցութիւն ունին նրա խելքի զարգացման վրայ. նրա ստացած գաղափարները կախումն ունին նրան շրջապատող իրերի պարզութիւնից, ուստի պէտք է երեխային շրջապատել այնպիսի խաղալիքներով, որոնք հասարակ ձևեր և պարզ գոյներ ունին. բաղադրեալ խաղալիքներն ու գոյներն երեխան չի կարող ըմբռնել։

Նայելով խաղի նիւթին՝ խաղը կարելի է երկու մասի բաժանել. Ա. խաղ անշունչ իրերի

հետ. և Բ. երբ երեխան ինքն իրեն է կամ իւր նմանների հետ է խաղում։

Մանկական պարտէզն առաջին կարգի խաղերի շարքն է դասում՝ գնդակը, գունդը և խրանարդ փայտիկներով խաղալը. իսկ երկրորդ կարգի խաղերը տեղի են ունենում քայլելով, թռչելով, վազելով, շրջան կազմելով և մատներով խաղալը, որոնք ընդհանրապէս կոչւում են *շարժողութեանց խաղեր*։

Ինչ վերաբերում է խաղերի իրագործմանը, պէտք է ասել, որ դաստիարակն երբէք չպէտք է ստիպէ երեխաներին այս կամ այն խաղն ընտրել, կամ թէ անպատճառ ինքը չպէտք է միջամտէ. սակայն նրա իրաւունքը և պարտականութիւնն է դիտել, հսկել և առաջնորդել մանուկների խաղերը և դաստիարակութեան նպատակներին յարմարեցնել։ Նա պէտք է հսկէ, որպէս զի այնպիսի խաղեր չխաղացուին, որ վնասեն երեխաների առողջութեանը և բարոյականութեանը. ամենայն խստութեամբ պէտք է հեռացնել վնասակար խաղերը և կեանքի ու առողջութեան հետ չպէտք է կատակ անել։ Արգելուած պէտք է լինի նաև թունաւոր, սրածայր և կտրող իրերով խաղալը, կրակի, լուցկու, ջրի և դիւրավառ իրերի հետ խաղալը, որպէս զի դժբաղդութեանց առիթ չտրուի։

Իսկ փողոցային և անբարոյական սաղմեր պարունակող խաղերը բոլորովին պէտք է մերժուին մանկական պարտիզի շրջանից։

Բացի մարմնի անդամների շարժողութիւնից, մանկական հասակում երեխան է գալիս հողի հետ խաղալու և գետինը փորելու ձգտումն. երեխաները մեծ զուարճութիւն են զգում, երբ մատներով կամ փայտով փորում են հողը, փոքրիկ պարտէզ շինում, ածուներ կազմում և սերմ ցանում ու բոյսեր տնկում։

Մանկան այդ ձգտումն առիթ է տալիս մեզ նրա ուշադրութիւնը դարձնել բնութեան բերքերի վրայ և մանկական պարտէզը պէտք է օգտուի այդ հանգամանքից և թոյլ տայ երեխաներին մի փոքրիկ պարտիզում զբաղուելու այդ գործով։

Երբ մանուկը միմիայն դիպուածով է ծաղիկ քաղում, բոյսեր ժողովում, այդ մի խաղ է նրա համար—ուրիշ ոչինչ. իսկ երբ երեխան պարտիզում ունի իւր սեպհական ածուն և սովորում է բահով, ցաքանով աշխատել, ածուն ջրել, քաղհանել՝ անհամբեր սպասում է թէ ի՞նչպէս պէտք է բուսնի իւր ցանած սերմը, ինչպէս ծլէ, կոկոն բռնէ, ծաղկէ։ Պէտք է տեսնել, թէ նա ի՞նչպիսի հրճուանքով է կտրում իւր աճեցրած բոյսի ծաղիկը և թռչկոտալով տա-

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
Москва, Мясницкая
Ա. ՍԱՄՍՈՆԻՅԱՆԻ ԱՆՎԱՆ

նում իւր մօրը տալիս։ Նոյն զուարճութիւնն է զգում նա, երբ դիտում է ծաղկի հիւթը ծծող մեղուի գործողութիւնը, թռչունների, թիթեռնիկների և բզեզների թռիչքը—մի խօսքով բնութեան մէջ կատարուած գործողութիւնները գրաւում են նրա ուշադրութիւնը և հետաքրքրութիւնն աւելի մեծ չափով, քան թէ դայեակներն ու գրքերը։

Մանկական պարտիզում պէտք է ուշադրութիւն դարձնել նաև երեխաների զգայարանների կանոնաւոր զարգացման վրայ. ձեռքերի մատների զարգացմանը պէտք է նպաստել զանազան նիւթերից իրեր շինել տալով. օրինակ՝ խորանարդ փայտիկներով զանազան շէնքեր, գոյնզգոյն թղթից ձևեր և այլն։

Մանուկներին այդ հասակում աշխատութեան վարժեցնելով՝ մանկական պարտէզը բարոյական մեծ ազդեցութիւն կարող է ունենալ նրանց ապագայ կեանքի վրայ. երեխաները սովորում են աշխատութեան և դրանով միևնոյն ժամանակ սովորում են ճանաչել իրենց պարտքը և կատարել։

Երեխային պէտք է թոյլ տալ, որ ինքն ընտրէ իւր խաղը. ինչ որ ինքը հասկանում է՝ այն ձեռնարկէ, ինչ որ իրեն դուր է գալիս՝ նրանով զբաղուի—այդպիսով միայն կարող է

զարգանալ մանկան մէջ *ստեղծագործութեան* ոգին։

Եւրոպայ սովորական խաղալիքներից մանկական պարտիզի խաղերը նրանով են տարբերւում, որ առաջինները միշտ միևնոյնն են մնում ամեն մի մանկան համար, իսկ ընդհակառակը մանկական պարտիզում միևնոյն խաղից, միևնոյն թղթից ու փայտից իւրաքանչիւր երեխայ տարբեր բաներ է շինում և այդպիսով ամեն մէկը ցոյց է տալիս իւր շնորհքն ու ընդունակութիւնը։

Մանկական պարտիզում մանուկն առարկաների հետ գործ ունենալով՝ վարժւում է զանազանել նիւթի մեծութիւնը, ձևը, գոյնը, հաստութիւնը և այդպիսով զարգանում են նաև նրա տեսանելիքն ու չօշափելիքը։

Քրէօբելեան ցանցը միջոց է տալիս արդէն չորս տարեկան երեխային խորանարդներով ու ձողիկներով շինել՝ աթոռ, սեղան, տուն, խաչ, կամուրջ, սանդուխտ. վերջը երեխան այդ ցանցի օգնութեամբ կարում, հիւսում, գծում և նկարում է հազար ու մի տեսակ իրեղէններ ու կենդանիներ և այդպէս իւր զգայարաններով ըմբռնածն աւելի ամրապնդում իւր մտքի մէջ։

Մանկական պարտէզն այդ խաղերով աշ-

խատում է ոչ միայն վարժեցնել մանկան զգայարանները, այլ և կազմակերպում է նրա լեզուն և հարստացնում նրա գիտութեան պաշարը։ Մանուկը սովորում է ուշադրութիւն դարձնել առարկաների առանձնայատկութեան վրայ. ամեն մի նոր առարկայ նրան տալիս՝ պէտք է նախ ծանօթացնել այդ առարկայի յատկութիւնների հետ. օրինակ եթէ խորանարդ ենք տալիս նրան, պէտք է նրա ուշադրութիւնը դարձնենք այն հանգամանքի վրայ, որ խորանարդը շինուած է փայտից, փայտը ստանում ենք ծառից. ծառը բուսնում է և այլն. խորանարդն ունի վեց երես, իւրաքանչիւր երեսն ունի չորս անկիւն և այլն։ Նոյն կերպով պէտք է ուսումնասիրել նաև խորանարդի միւս յատկութիւնները — օրինակ գոյնը, ծանրութիւնն ու մեծութիւնը և այլն։ Այդպիսով երեխաներն աննկատելի կերպով ձեռք են բերում գիտութեանց տարրերը և կարողանում են իրենց սովորածն առանց դժուարութեան՝ լեզուով արտայայտել։

Մանկական պարտէզն օգուտ քաղելով երեխաների դէպի երգն ու հեքաթներն ունեցած բնական հակումից ու սիրուց, առանձին ուշադրութիւն է դարձնում նաև ականջի վարժութեան վրայ։

Մանկական պարտիզի համարեա բոլոր խաղերը կապակցւում են երգի հետ։

Մանկական պարտէզն ընկերական կեանք է ստեղծում երեխաների համար. և այդ մեծ նշանակութիւն ունի նրանց դաստիարակութեան համար, որովհետև երեխայի բնաւորութիւնը միայն երեխաների մէջ կարող է կազմակերպուել։ Լաւ կազմակերպուած ընկերական կեանքի մէջ կոպիտ բնաւորութիւնները մեղմանում են, հպարտները հեզանում — որովհետև միջոց են ունենում՝ համեմատել իրենց անձը ուրիշների հետ։ Պէտք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ երեխաներն ինչպէս քարին, նոյնպէս և հաղը շուտով են ընդունում. նրանց բնաւորութիւնը վատ հասարակութեան մէջ շատ շուտ կարող է փչանալ. նրանց մէջ շատ շուտ են արմատանում վատ ցանկութիւններն ու սովորութիւնները — նա՛ մանաւանդ տգէտ ծնողների, ծառաների, աղախինների և փողոցային երեխաների շրջանում. այդ տեսակէտից էլ ահա՛ մանկական պարտէզը բարերար և փրկարար ազդեցութիւն կարող է ունենալ երեխաների բարոյական զարգացման վրայ։

Մանկական պարտէզը խաղերով, փոքրիկ և զուարճալի պատմութիւններով երեխաներին հեշտ և հետաքրքիր եղանակով ծանօթացնում

է զանազան գիտութիւնների սկզբունքների հետ, սովորեցնում է կանոնաւոր խօսելու և պատմելու ձևերը, սովորեցնում է իրաւունութեան, աշխատասիրութեան, ինքնուրոյնութեան, հնարագիտութեան և կարգապահութեան։

Մանկական պարտիզի զբաղմունքները զարգացնում են մանուկների բոլոր ընդունակութիւնները, զգայարանները, մարմինը։

Մանկական պարտիզի զբաղմունքներն երբէք ձանձրալի չպէտք է լինեն. խաղը, քայլելը, մարմնամարզութիւնն ու երգը թարմացնում և զուարճացնում են երեխաներին։

Մանկական պարտէզների հայր Ֆրէօբելը երեխայի վրայ նայում է որպէս մի բոյսի վրայ, որ պէտք է խնամել և զարգացնել. նա երեխային շրջապատում է բնութեան զարդերով. ծաղիկներով, ծառերով, կանաչով, ուր ամեն բան ժպտում է նրա երեսին և ուր նա կարող է զարգացնել իւր ընդունակութիւնները։ Եթէ բոյսի նոր ծիլեր արձակելու ժամանակ լաւ չխնամենք, ապագայում բոյսը կարող է անպէտքանալ, այնպէս էլ եթէ երեխային մանկական հասակից արդէն մեր հոգատար խնամքին չենթարկենք, ապագայում կարող է շատ վատ յատկութիւնների տէր դառնալ և անխնամ

թողնուած բոյսի նման անպէտքանալ՝ թէ բարոյապէս և թէ ֆիզիկապէս։

Ահա այս սկզբունքներով ղեկավարուած *ծաղկոցը* մենք համարում ենք վերին աստիճանի օգտակար հիմնարկութիւն և ցանկալի համարում, որ այդպիսի դպրոցների թիւը բազմանայ և հայ ընտանիքներին օժանդակէ՝ մանուկներին դաստիարակելու բարոյական սկզբունքներով։ Գործի յաջողութեան համար հարկաւ ամենակարևոր հանգամանքն այն է, որ *ծաղկոցի ղեկավարը* մասնագէտ և հմուտ անձն լինի. հակառակ դէպքում երեխաները կտուժեն։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Армянская Библиотека
7/31 1922
Ա. ՄԱՍՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԻՍԱՀԱԿ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻ

Թարգմանութիւնները

1. ՊԵՍՏԱԼՈՑԻ. Լինհարդ և Գերտրուդ. վէպ գինն է 1 ր. 50 կ.
2. ՀՈՒՔՍԼԷՅ (Գէրսլի) Տարերք բնական գիտութեանց գինն է 40 կ.
3. ԴՐ. ՆԱՌՈՒՄԱՆ. Էրզրում. գինն է 15 կ.
4. Ե. ՍՊԻՐԻ. Վարդ Բեսլին գինն է 10 կ.
5. » Ուռենց Յովսէփ. գինն է 15 կ.
6. » Այծարած Մօնի. գինն է 15 կ.
7. » Ալպեան Հովիւ. գինն է 20 կ.
8. » Հայրենազուրկ. գինն է 50 կ.
9. ԼՕԿԱՅԻ. Ուրացողը. գինն է 20 կ.

Մամուլի տակն է.

10. ՊՐՕՖ. ՌԱՏՑԵԼ. Տարերք աշխարհագրութեան.

Աշխատասիրը. գիրքերը ձեռնարկուած. էջն վճարող՝ Հասցէն՝ Армянская Семинарія Нерсисянъ. Исааку Арутюнянцъ կամ, Бебутовская (Садовая) № 38.

ՀՀ Ազգային գրադարան
NL0235281

50. 823

ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՔՆ

1. Խուլ Խաչիկ, պատմական վէպիկ. Բամա-
   լեանց Ս. 1894 . . . . . — 25
2. Գէրիզադէի երգը, Փոքր Ասիայի կեան-
   քից, Թարգմ. Ց. Լալայեանց 1894 . . — 25
3. Ղարիբ մշեցի պատկ. տաճկահայ. ներկայ
   կեանքից 1894 . . . . . — 10
4. Հուբոլէյ. Տաբերը ընական գիտու-
   թեանց. Ժողովրդ. ընթերցանութեան հա-
   մար գերմ. թարգ. Խս. Ցարուբիւնեանց
   1894 . . . . . — 40
5. Վահան Մամիկոնեան. Ճաղարբէգ. Ց.
   1894 . . . . . — 40
6. Արպեան Հովիւ, գերմ. Թ. Խս. Ցարուբիւ-
   նեանց 1895 . . . . . — 20
7. Հայրենազուրկ, գերմ. թարգմ. Խս. Ցարու-
   թիւնեանց 1896 . . . . . — 50
8. Գիւղական վարժուհի, Զիամպոլիի, թարգ.
   Լ. Մելիք Ադամեանի 1897 . . . . — 25
9. Հոֆման. Զինուոր Ցակոբ, գերմ. Թ. Տիր.
   Կոստանեան 1897 . . . . . — ?
10. « Կեանքի դպրոց, գերմ. թարգ.
    Տիր. Կոստանեանց 1897 . . . . . — 10
11. Ցուդայի վերջին զիշերը. թարգմ. Աբր.
    քահ. Շիրինեանց. 1898 . . . . . — 7
12. Խս. Ցարուբիւնեան. Ծաղկոց. 1901 . . — 10

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊԵԿ